

ՎԱՂՈՒՄԱՆ ԶԱՅՆԸ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍԵԱՅ ԱԶԻԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԱՅԼԱՍԵՐՈՒՄ

Երբոր հայկական ջարդերուն լուրը ըստուգուեցաւ Եւրոպայի մէջ, մարդիկ որոնք կը պարծենան ինքզինքնին քրիստոնիայ կոչելու, հազիւ ունեցան վաղանցուկ սրտմտութեան շարժում մը: Դաշունուած անհամար դիակները վարկեան մը միայն գրաւեցին ազատ ամբողջներու հետաքրքրութիւնը, ու յետոյ մոռցուեցաւ ամէն բան: Ստրկութեան եւ վատութեան այս չըջանին մէջ, թերեւս տրամաբանական ըլլայ այս անզգամութիւնը, քանի որ անոնք որ պաշտօնը ունէին հսկելու արգարութեան գործադրումին, եպիսկոպոսները եւ կայսրերը, անօրինակ բան մը չէին տեսներ ամբողջ ազգի մը խողխողումին մէջ: Կը յիշենք Լօպատնօֆի խօսքը որ պատմական պիտի մնայ: Այս քրիստոնեայ իշխանը կըսէր՝ Ուրֆաի հրէշային գազանութիւններուն առթիւ. «Աննշան պատահար մըն է որուն վրայ շարժեր ծանրանալ»: Դէպքերը չը հերքեցին այս յայտարարութիւնը: Այսօր Եւրոպան, պզտիկ ազգերը արիւնի մէջ խեղդելէն ետքը, բարբարոսներու յաղթանակը իրականացնելէն ետքը, անկախ բայց տկար երկիրները մէկիկ մէկիկ իւրացնելէն ետքը, երբոր ալ բան մը չէ մնացած յափշտակելու, կը ձայնակցի Զարին զինաթափութեան առաջադիւն. ինչ հեղուութիւն:

Ապացուցանելու համար ժողովուրդներու եւ կառավարողներու ստորնացումը հայկական մարտիրոսութիւնը չէ, աւա՛ղ, որ միայն կը ներկայանայ մեզի: Քանի ջանի ոճիրներու արիւն կը կարմրցնէ այս մահուան մօտ դարակերջը: Երէկ Յունաստանն էր որ կը ճգմբէր ամբողջ Եւրոպայի մեղաւիցութիւնով. կաթողիկ Սպանեան կը վերակենդանացնէր հա-

տաքննութեան սոսկումները, ու երբ Միաեալ-Նահանքները ապահովցուցին Քուպի ճոկախութիւնը՝ բռնաւորները վախեցով, աշտարհիս գրեթէ ամբողջ մամուլը կարտատուէր: Եսթրիլեան պարտութիւններուն վրայ: Այսօր Երէտէի մէջ նորէն կը սկսի սպանութիւններու ժուականը ու Միջերկրականի գեղեցիկ կղզին լաւերակ կը դառնայ միջազգային ուժերու լաշտայանութեանը տակ:

Եսասիրութիւն: Եւ սկիսկիկութեան շրջանի մը մէջ է որ կապրինք, ու բարոյական մեծ ուժերը որոնք համերաշխութեան կապ մը չը հաստատէին ազգերու մէջ, կը քայքայուին իւրաց կամաց: Ազնիւ աւանդութիւններու մահն է այսօր: Հեռու են այն ժամանակները որ ժողովուրդները բորբոքած ջերմ հաւատքով մը, ամէն բան կը մոռնային ինքզինքնին նշխրելու համար զազախարի մը յաղթանակին: Ասիկա իր խորունկ պատճառները ունի: Նախ, քրոնական զգացումը որ կը կորսնցնէ յամբօռէն իր նախկին ազգեցութիւնը: Քսաներորդ արքայ պիտի տեսնայ ապահովաբար բացարձակ անկարողութիւնը գործունէութեան երբեմնի այս անհաւոր լծակին: Բնազգական հաւատքին տեղ կը յայտնուի այսօր բնազգական թերաւաւատութիւնը որուն հիմնապէս կը պակսի ամէն մեծութիւն, որովհետեւ համազումը, ընդայ որքան սխալ, որքան մոլեռանդ, միշտ զինթաղրէ խղճմտանքի գեղեցկութիւն մը: Ինչ որ հողիէ կը բլթի նուիրական է» կըսէր Գիտութեան Ապագան ի հոյակապ հեղինակը: Դիջին դարու հաւատացեալները որոնք կըրէային մեռնիլ քրիստոնէութեան սիրուն հաւար, շատ աւելի ազնիւ գործ մը կիրականաբնէին, հակառակ իրենց սահմանափակ հաւատացողութեան, քան թէ ժամանակակից ըս-

կեպտիկութիւնը որ հումանիշը կըլլայ վատութեան: Գիտակցութիւններու այս այլասերումին համար ապրելու յարաճուն դժուարութիւնները կըլլան ազդեցիկ սատար մը: Կեանքի պայքարը եւ զրկանքներու երկիւղը եսասիրութիւնը միայն կը ստեղծեն: Գիտակից չարութիւնն է, կեղծիքը, շնականութիւնը: Նիւթական բարօրութեան միշտ սաստկացող տեսնջանքը բարոյական մեկուսացում մը կը հաստատէ մարդերուն մէջ ու ընկերութեան էն բարձր աստիճանէն մինչեւ էն յետինը, անիկա կըլլայ կեանքի միակ սկզբունքը, միակ նպատակը:



Թերեւս երբէք այս ճշմարտութիւնը այնքան ուժով չը պարզուեցաւ որքան Յրանսաւի վերջին օրերու ողբերգական պատմութեան մէջ: Ինչ խորունկ եւ խնամալից, միանգամայն ինչ ցաւազին դաս մը կը բովանդակէ կատաղի կիրքերու այս պոռթկումը որ յեղաշրջեց ամբողջ երկիրը, արձագանգ գտաւ էն հեռաւոր ժողովուրդներուն մէջ: Բոլոր ապականութիւնները որոնց կարող ըլլայ հասնելու մարդկային արարածը, ընկերական ամբողջ արատը, ու միեւնոյն ատեն էն գեղեցիկ եւ հազուապէս քաջութիւնները հոս են, հըզօրապէս համադրուած:

Հանրապետութեան համար ճգնաժամային եւ վճռական շրջան մըն է որ կանցնի: Իստական խնդրի մը շուրջը կատաղի պայքար մըն է որ կը մղուի: Մէկ կողմէն, ամենահզօր դաշնակցութիւն մը նենգամիտ բաղդախինդիւններու եւ մոլեռանդ ազանդաւորներու եւ միւս կողմէն, աի մը անվեհեր մարդիկ որոնք արհամարհելով բոլոր սպառնալիքները եւ ծուղակները, անձնուիրօրէն կը յամառին արդարութեան գործի մը յաղթանակին համար: Սպայ մը, թիարանի դատապարտուած հայրենիքի մատնութեան յանցանքով, անմեղ է. նոր յայտնութիւններ կապացուցանեն ասիկա ու ճշմարիտ մատնիչը ծանօթ է ամենուն: Ինչ պարզ ու նուիրական պարտականութիւն հանրապետական Յրանսաւի համար ընել պատուի հասուցումը զոր կը պարտի մարտիրոսի մը, ու պատժել յանցաւորները, որ գոսակարգէ որ

ալ ըլլան: Բայց ո՛չ, Տրէյֆիւս դաւադրութեան զոհ մըն է, ու բարձր մեղաւորութիւններ մատ ունին կատարուած անօրինութեան մէջ: Պէտք է ամէն բան ընել խեղդելու համար խնդիրը ու փրկելու, արդարութեան ձեռքէն, քանի մը խայտափղէտ զօրավարներ: Կառավարութիւնը կը պահանջէ ասիկա: Երեսփոխանութիւնը, ընտրողական հաշիւներով, գլուխ կը խոնարհէ սուտ յայտարարութիւններու եւ կեղծ թուղթերու առջեւ: Ատենակալութիւնը, հլու գործիք զօրավարներու ձեռքին մէջ, կը խեղաթիւրէ օրէնքները, կը հալածէ ազնիւ եւ պարտաճանաչ անձեր, անպալտ կարճակէ ոճրագործներ որոնց նենգութիւնը ակնհարեւ է:

Ի՞նչպէս պատասխանեց Յրանսաւ բոլոր այս վատ մեքենայութիւններուն: Մեծ յեղափոխութեան երկիրը, ուր հոշակուած է քաղաքացիներու բացարձակ հաւասարութիւնը օրէնքին առջեւ, ինչ սրտամտութիւնով պէտք էր բողոքել, պէտք էր ընդվզիլ սպառնացող պետական հարուածին դէմ:

Հակառութիւնը շատ տխուր է երէկւան ու այսօրուան Յրանսաւին մէջ, երբոր փառաւոր աւանդութիւններով լեցուն անցեալէ մը ետքը, այս երկիրը որուն լոյսը առաջնորդեց ամբողջ աշխարհներ, կը մեռնի բարոյական էն ամօթալի անկումին մէջ, հանգուրժելով խաբեբաներու եւ անկարողներու խումբի մը իրրեւ իրեն իշխան:

Անտարակոյս, — ու քիչ մը առաջ յիշեցի արդէն — անհատական մեծութիւններ չին պակսիր մեր միաթարութեանը համար: Մեծ գրագէտը միայն որ պարզ եւ զիւցագնական արարքով մը իր ըմբոստացումը ունաց կատարուած ոճիրին դէմ, պիտի անայլալ պահէ մեր սէրը Յրանսական երկրին: Ու իրեն հետ միասին ուրիշ սիրուած եւ զեղեցիկ անուններ: Բայց ապիկարութիւնը այնքան մեծ է մեր շուրջը որ վայրկեան մը միայն կը նշմարենք զանոնք: Երկիրը կը միայ ինչ որ է, ու քանի մը աղնուական ձայներ կը խեղդուին իր մէջ:

Նախ մամուլը: Յրանտաի մէջ մամուլը ամէն բան է: Անիկա է որ կը շինէ ու կը տապալէ կառավարութիւնները, կը ստեղծէ ինչ որ հանրային կարծիք կը կոչեն: Օրագրու-

Թիւնը կը հասնի զարգացումի այնքան բարձր աստիճանի մը որ մեծագոյն պատասխանատուն կը լայ ժողովուրդին բարոյականին:

Սիրուած գրագէտներու անունին հետեւ, որոնք կանպատուին անբարոյական սնորհներու զբայնութիւնով, մամուլը սքանչելիօրէն կազմակերպուած հաստատութիւն մըն է մատուցեալն եւ գողութիւններու: Ո՛չ մէկ անըզգամութիւն կը վարանեցնէ զանի ու ապահով հասնելու իր նպատակին՝ կը գործադրէ էն ծայրայեղ միջոցները: Կը կազմակերպէ հաւաքումներ, կը պատրաստէ ցոյցեր ուր վարձուած մարդիկ կը ծափահարէն իրենց բարերար թերթը, կը գործադրէ շանքաժողով մանաւանդ, յաջողելու գերագոյն ապուէնը, այնքան սիրելի՛ հակասեմականներուն:

Միլիօնաւոր քաղաքացիներ ամէն օր կը խմեն, գարշելի սուտերու, խեղաթիւրումներու եւ զրպարտութիւններու մէջէն, ատուութեան ու եղբայրասպան կիրքերու թոյնը:

Անդխտակցութիւն արդեօք այս բոլորը: Ու հոս է որ ոճիրը կերեւայ իր յիմարեցողիչ պղծութեան մէջ: Այս մարդիկը հասարակ ոճրագործներ չեն: Կը ճանչնան ինքզինքնին աւելի աղէկ քան ոչ ոք: Գիտեն թէ իրենց նայրեկիքի եւ քանակի անունով տխմար խանդավառութիւններուն ետին կը պահուրտի ժլատութիւնը, նիւթական յաջողութիւններու ցանկութիւնը: Գիտակիցներ են, բառին բովանդակ նշանակութիւնովը: Ու գիտակցութիւնը կը թուի ըլլալ, մեր ժամանակին մէջ, Չարիքին մեծագոյն նկարագիրը:

Տրէյֆլուսի խնդրին գոյտ թեմէն ի վեր, տարի մըն է որ, ամէն օր, այս գարշելի մամուլը հայհոյութիւններու հեղեղներ կը թափէ մեծ քաղաքացիին ու մեծ գրագէտին վրայ որ այսօրուան Ֆրանսաի էն զուտ փառքն է: Կոչում կընէ քաղաքային պատերազմի, կը գրգռէ անասնական կիրքեր, ու յանցանքը իրը չէ եթէ էմիլ Զօրս մահէն ազատեցաւ՝ Արդարութեան Պալատին առջեւ՝ զատավարութեան տասնը հինգ օրերուն մէջ: Պատիկ ճիգ մըն ալ, ու Բարիզը նախանձելու բան մը պիտի չունենար մեր Պօլիսէն:

* *

Ժողովուրդ մը որ անտարբերութիւնով իր երեսը կը գարձնէ արդարութեան՝ ինքզինքը մահուան կը դատապարտէ: Ասիկայ պատմութեան յաւիտենական ճշմարտութիւնն է: Ֆրանսաի համար կը շեշտուի այս հաստատումը որովհետեւ վատութիւնը կը սարածուի ընկերական ամբողջ շէնքին մէջ ու միայն ամբոխին ապականութիւնը չէ որ կը տրամեցնէ մեզի: Անոր կուրութիւնը կարգարանայ ու անինքնագէտ մղումները կը վերպին պատասխանատուութեան: Բայց զարգացածները կան, գիտակիցները, անոնք որ երկրի մը ճշմարտ մեծութիւնը կը շինեն, անոնք որ գիտեն իրենց պարտականութիւնները, խորհողները, գիտունները, արուեստագէտները: Ասոնց մեծութիւնը թերեւս մոռցնել տար մեզի ժողովուրդին վատթարումը, որովհետեւ բնազական կեանքերէն չէ որ պէտք է սպասել հայրենիքներու փառաւորութիւնը. 89ի յեղափոխութիւնը մեծ եղաւ անոնցմով որ անոր մշտաւորական խմորը պատրաստեցին եւ ոչ թէ արիւնի ծարաւի մոլեռանդներով որ Կլյեօթիսի գոպակը խաղցուցին քաղքենի գլուխներու վրայ: Այսօր Ֆրանսաի ընտրուած մասը կը թերանայ իր պարտքին մէջ: Հազուադեպ բացառութիւններէ վատ, որոնք մտիկ ըրին իրենց խղճմանքին, ամենքն ալ, լուռ իրենց անկիւններուն մէջ, վատօրէն, շնակածօրէն կը թողուն որ գործադրուի ամէն ղեղճում: Գիտակցութեան ի՛նչ մոլորումով, ի՛նչ անլուր ապիրատութիւնով այս մարդիկը որ զիսեւ թէ անմեղ մը կը մեռնի, հեռու, ովկէանի ժայռերուն վրայ, կրնան ապրիլ, զբօսուլ, անտարբեր անցնիլ անզգամութիւններու այս միշտ բարձրացող հեղեղին մէջ:

Ասոնք մեր անգրանիկները, մեր առաջնորդողները եղան բարոյական անկախութեան գործին մէջ, բայց այսօր, հաշուի ողորմելի նկատումներով, ծունկի եկած գարշելի ժողովրդականութեան առջեւ, կուրանան ինքզինքնին, իրենց հաւատքը, իրենց յայտարարութիւնները: Ասոնց աջակցութիւնը պիտի բաւէր լուսաւորելու համար երկիրը, պիտի ճշմէր բանաւորներուն գլուխը, ու փրկէր վերջապէս այս խեղճ ու մեծ Ֆրանսան:

ԼԵՒՈՆ ԱՐՄԷՆԵԱՆ

ԿՈՒՈՔ ՍԸ

Կունք մը՝ անկեքեք ու նոյրական՝ գոր ջեւ գիտեր ինչ աշխարհակ ու վտեւ խանդարաւոնքեան օր մը ծնաւ անբոխի մը հոգին:

Ռաւիկ ու մեծածխոր, բայց այնչափ որչափ միայն կրնան ըլլալ անոնք որ բան մը չունին ըսելիք, անկիրք ալ, ու անկարող ու եւ հիշմահարութեան, բայց բարի, գեղջուկի մեծամտութիւններով, — Խրիստեան վերջնական տպարար եղաւ զանդաղ ու գուարք Վանցիին:

* * *

Վանքի մը մտքեան ու սուգին մէջ ջը կրնալով բանեղ իր անսպառ ու հսկայ ու երջանիկ խնդրով, որոշեց հայրենասէր մը ըլլալ օր մը, ու սկսաւ իր ասանդակի կեանքը:

Այս մտորը անէն ժող անչափ վայելող մը եղաւ:

Իր հայրենասիրութեան հաւքաւը իր առջեւն զնաց, ու գրկաբաց հիւրասիրութիւններ իրեն սպասեցին:

Սակեհէն աւելի Պօլիսը սիրեց: Վանցիին անձաշակ մը չէր:

Չսպասուած ժաւերու դուռն ափ կառներ, ներս կը մտնէր, բազմոցին վրայ կը նստէր ու զանկի կերկնցներ իր առաջնական ոտքերը, որպէսզի կոշիկը հանէ, ու պզտիկը կը վարձարէր գորովագին ու հօր ապստոյ մը:

— Անօրի եւ, կըսէր ապա կնոջ դառնարով:

Ու կերակուրդ յափեցէն ետք՝ կնիկդ կը նախասէր, խորհիկներուն անբաւական հատկորութեան հաւար, ու կարօտայի ներքոյ մը կը սկսէր բանասպարհի վրայ, Վանի աննահ բանասպարհին, զոր զազաղներու սուցեւ անգամ չէր մոռնար իր զանբանականներուն մէջ:

Եզակիս, ազնուական ու արցաւ մարդ: Կաշտօքը բնաւ չճանչցաւ: Ժաւերդ կառներ՝ մեռելիդ սուցեւ ժաւուկիս գուարձացնելու ու «խընդափէն» բացնելու հաւար սգակիր... հիպոցողներու վաս խոժժան մը որ բնական կը գտնէր այս պիղծ միտնութիւնը:

Այս միտնոյն մարդն էր որ, իբրեւ նախկին պատրիարք, տարիներով Սուրբանէն անսա-

կան կորիկ բոշակ մը ստացաւ լուռ երախտագիտութեամբ մը, առանց դադրելու մեծ ու բոցեռանդն հայրենասէրն ըլլալի: Այս արքայական անբարոյականութիւնը նոր խանդաղասաններ միայն բերաւ իր անունին շուրջը, իր առաստձեռնութիւններով ապրող փոքրատներու աշակցութեամբը:

* * *

Քնարերգակ՝ ինչպէս քիչ մը բոքոր Վանցիները, Մուսաներն ալ մշակեց իր երիտասարդութեան օրերուն. ու գրեց քանի մը արձակ հասարակէր որոնց երկրորդ երեսը չկրցանք դառնել, հակառակ մեր բոքոր հայրենասիրութեանը եւ որոնք էն անհաւ գրագէտը կրնէն զինքը Վարագի դպրոցին, որ մեզի տաւ Մուսանձեանը ու սա միս մեծ մոռցուածը, Տեղիկանց, մեր գաւառական գրականութեան մեկնասիկ հրաշակիչին, «Շահէն ի Սիսի»ի հեղինակը:

Խրիստեանի գրականութիւնը գոնէ գուարձայի ըլլալու առաւելութիւնն ալ չունեցաւ... իր զանբանականներուն պէս:

* * *

Ու պաշտեցին զինքը, ծննդի, Վասպուրականէն մինչեւ Երուսաղէմ, անհաւար միտնիտ արտեր: Անոր ետեւէն զացին հնաշուք, անբանացած անոր հայրենասիրական աննի շունչին:

Ու երկդիմի կուռքը կ'աղաղակէր վեհափառ ու տրական:

— Խաչաստ՝ն... բանասպարհ... անուշ խաչեմիք...:

Ու խեղճեղ անբոխը կը պոռար. « Հայրիկ, Հայրիկ... »:

Ասիկա ժողով միջեւ այն զերագոյն ջրեծութեան օրը ուր «աննեայն հայր» կարողիկոս հոշակուեցաւ Խրիստեան: Հոշակաւ վայրկեան մըն էր. ու անբողջ ազգը ապափիկողի սաւուկ ու յուսայի նայումներով հետեւեցաւ իրեն մինչեւ Արարս:

Ու սպասեցիմք, սպասեցիմք...:

Լուրերը չուշացան, ու դառն, ընկճող եղաւ յուսախաբութիւնը: Այ կասկեղգութիւնը վերջացած էր: Խրիստեանի խեղճուկական կարողիկոսութիւնը անօրեց անբողջ պարսպն ու սխալը իր կեանքին:

* * *

Հինս յոգևած, գառաւսած, աշխատեալ շահասակաբաններէ վերջը կը մտախեւ էջմիածնի գահուն վրայ:

Գունդ անուշ ըրայ, Հայրիկ:

Ձեզ յեկեմ կրեար ասեդ: Քիչ մը գառակներն եկեմ մեր հայրերուն:

Բայց կը սրտիկեմ մտածելով որ հայոց յիսուսաբանուած, ինկարկուած Հայրիկեմ վաղը պիտի մնայ, պատմութեան մեջ, անխնայ եւ ունայն «ժեսք» մը միայն:

Տխուր ծերունի:

ՍՈՒՐԵՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԻՓՍԻՔԻ

Մեր ազգային նկարագրին մէկ հրապոյրն ալ այն առեղծուածն է զոր կը ներկայացնէ խորհողին, առեղծուած մը մտայանփոյց՝ ցորչափ չէ գտնուած անոր «Մտահանգոյց մեկնութիւն»ը, ինչպէս կը գրէին մեր միամիտ նախնիք Սաղմոսի եւ ուրիշ կրօնական գիրքերուն ճակատը:

Ուսկի՞ց է, օրինակի համար, այսքան չարչրկուած ու տառապանքով ծերացած ազգի մը քով այն անկապտելի գիտակցութիւնը՝ թէ լաւագոյն բազմին իբաւունք ունի, թէ Եւրոպական որ եւ է ազգին հետ համահեա կրնայ ընթանալ՝ նոյն պայմաններու մէջ, թէ ինքը ծնած է մեծութեան արիանալու, ուսկի՞ց է վերջապէս այն մեծամտութիւնը, եւ — ըսենք բառը — ամբարտաւանութիւնը որ ամէն Հայ, հարուստ կամ աղքատ, գրագէտ թէ անուս կը կրէ իր մէջ, եւ որ հետաքնին մտքերու ուշը գրառուած է: Ձգենք օտարները, ահա նոյն իսկ մեր պատմահայրը որ կը հռչակէ. «զամբարհաւաճութիւն ազգիս մերոյ ի սկզբանցն եւ այսօր... բնութիւն ունելով զբարձրացօնութիւն»:

Դարեր ետքը, ուրիշ մը մեր մատենագիրներէն՝ ոչ կղերական մը, այլ գործնական աշխարհէ՛ մարդերու կառավարող մը, մեր ու Հէլլեն գրականութեան ընտել՝ Բիւզանդիոնի

արքունիքէն գնահատուած, պաշտօն ու տիրոս առած՝ Գրիգոր Մագիստրոս ուրիշ անական չգտնեք Հայերը բնորոշելու եւ կը գրէ. «ամբարտաւան ազգն Հայոց»:

Թշնամիի զրպարտութիւնն չէ այս ուրեմն, այլ ներքուստ վկայուած՝ ճանչցուած իրողութիւն մը:

Նուազ գօրեղ վկայ մը չէ նաեւ մեր Բառագիրքը, որ մեր առաջ կը գնէ կատարեալ փունջ մը հոմանիշներու այդ բառին, բարձրացօն, ամբարհաւաճ, ամբարտաւան, հպարտ, գոռոզ, խրոխտ, վէս, սէզ:

Յատկութիւնն թէ յոռութիւն կոչել այս տիրող գիծը մեր նկարագրին: Թերեւս երկուքն ալ, քանի որ կը կազմէ մեր ոյժը, կը տածէ մեր հաւատքը, ամուր պահելու մեր ինքնութիւնը, վառ պահելու ներքին մեծ կրակը զոր չեն կարող մարել հողմերը գուրէն՝ որչափ ալ դաժան դան զարնել ազգին վրայ:

Այս հաւատքը, այս տոկունութիւնը չէ՞ արդարեւ որ քանի անդամներ նորէն կանգնել տուաւ ազգը՝ սպառիչ երեւցող գլորուններէ ետքը:

Ի՞նչ բանէ ծագում առած է այս զգացումը: Փառաւոր անցե՞ալ մըն է՝ մեր նախնիքներէ ապրուած, որուն յիշատակը եկած հասած է յաջորդներուն արձանագիրներով, զրոյցներով կամ վէպերով — զի մեր գրաւոր պատմութիւնը փառքի ետեւէն շատ արագ կը հասցնէ անկումն եւ աղետը — թէ իր շրջակին մէջ ամենէն զարգացածն ըլլալու գիտակցութիւնն է որ բարձրագոյն ճակատագրի մը անպարտելի յոյսը կը ներբռնի:

Խալաթեան ցոյց տուաւ թէ ազգային մեծ վէպ մը չէ եկած հասած մեղի, եւ նոյն իսկ գոյութիւնն չէ ունեցած, զրոյցները չեն ի յայտ բերեր մեր անցեալին վրայ մեծութեան անսխալելի զրոյշմը, բացի Հայկի զրոյցէն որուն հերոսը զժբաղդաբար երկիրք զրկուած ըլլալով իբր համատեղութիւն՝ միկամածային տպաւորութիւն մը կը ձգէ ճշդապահանջ մտքին վրայ: Իսկ արձանագիրները որոնք ազգին պատմութիւնը կը տանին մինչեւ անցեալի հեռատանները՝ Գրիստոսէ 1500 - 2000 տարի առաջ՝ Հայ հողի վրայ հաստատուած ու զարգացած ժողովրդի եւ պետութեան գոյութիւնը կը յայտնեն՝ վաղուց անձանօթ դարձած էին

և անոնց ընթերցումն իսկ մոռցուած էր, այնպէս որ մեր պատմագիրներէն ամենէն հինը անգամ բառ մը չգիտեր անոնցմէ, և ոչ իսկ աւելի հին օտար պատմիչներ:

Ոչ, ազգային այդ խրոխտութիւնը հաւանօրէն յառաջ կուգայ այն արհամարհոտ զգացումէն որով ինքզինքը վեր դասած է ան իր հարեւանը ապրող, իրեն հանդիպող ազգերէն ու ցեղերէն, բացի Հոռոմէն ու Յոյնէն: Կաղբք, Բասեանք, Ուտիք, Աղուանք, Վիրք, Կորդուք (Քիւրտերը), Խաղտիք, Ծոփացիք, Մելիտենէցիք, — ասոնք ամենքը Հայ ազգին գծած ծիրին մէջ արդարեւ պարուրուեցան զիւրաւ կամ կրեցին անոր ազգեցութիւնը, բայց այս մանր ազգերէն դուրս չանցաւ իր ներգործելու կարողութիւնը, այլ անոր փոխարէն՝ ինքը մեծապէս ազդուեցաւ, փոխ առաւ և ներգործուեցաւ Ասորեստանցիէն, Մարէն, Պարսիկէն, Պահլաւէն, Յոյնէն:

Ներգործելու ըստին, ու ներգործուելու ըստին ճշդումը կը ճշդէ նաև մեր ազգային զիրքն ու գերը և կարողութեան աստիճանը պատմութեան մէջ, և կը ճանչցնէ մեզ մեր իսկութիւնը:

Ասով երեւան չե՛լլար նաև մեր ազգին բուն և ճշմարիտ կոչումը. իր շուրջը գտնուող մանր ազգերուն առաջնորդն ու ուսուցիչը ըլլալ քաղաքակրթութեան և յառաջդիմութեան գաղափարներու, և զանոնք իր ազգեցութեան ներքեւ ունենալ, և իրօք ըլլալ Հանուրց Ասիականաց վեհադոյն ազգը:

Այս գերը՝ աներկբայ Հայոց բաժինը՝ որ այսօր անգլիոսկիցութենէ և մանաւանդ քաղաքական պատճառներով չէ գործադրուած, պիտի գործադրուի անշուշտ օր մը երբ արդար դատաստան և հաւասար պատեհ տրուին ամենուն Հայաստանի մէջ, և որ պիտի բերէ Հայոց ամենամեծ շահ ու փառք, անագան պտուղներ որոնք փոքր հատուցումը պիտի ըլլան Հայ ազգին տուած ահագին տոյժերուն այն օրէն ի վեր երբ Քրիստոնէութիւնը ընդունելով անչատեց ինքզինքը իր մերձակայ ազգերէն, և Արեւմուտք ուղղեց իր նայուածքը, թիկունք գարձնելով Ասիոյ:

Իժուար է սակայն միաբանիլ անոնց որ կը հաստատեն թէ Քրիստոնէութիւնը վընաս ըրաւ Հայոց մանաւանդ թէ օգուտ: Քրիս-

տոնէութիւնը զիւրացուց Արեւմտեան գրականութեան, գաղափարներու, քաղաքակրթութեան մուտքը Հայաստան՝ որ շուտ խմորուեցաւ անոնցմով՝ փոխանակ զինորելու անոնց դէմ: Այս խմորման շնորհիւ չէ՞ որ այնքան հեռի է փճանալէ Հայը ու վատասերելէ, ուրիշ Ասիոյ ազգերու պէս, և այնքան անձնանորոգ ոյժ կը կրէ իր մէջ: Ի՞նչ ոյժ է այն որ կրակապաշտ Պարսկին ու Արաբացուց յարձակումէն չսասանեցաւ, մինչ վերջինին մէկ բազիլումը մե՛ծ արքային Պարսկաստանը կործանեց և կրօնափոխ ըրաւ:

Քրիստոնէութիւնը Հայուն բնական ըզգացումը գերազանցութեան աւելի ևս ամրացուց: Հրոսակները որ իր վրայ կի՛յնային, իրենց ամենի բրտութեամբը, իր վրայ տիրող ազգերը որ զինքը կը կեղեքեն ու կը հարուստահարեն, լեռնցի Քիւրտը կամ զօրականը որ կը յափշտակեն գոյքը և կը թափեն իր արւունք՝ եթէ անգորութեան հառաչքներ խլած են իրմէ՝ չեն կրցած միեւնոյն ստեն զրդուել իր համոզումը իր գերազանցութեան վրայ այդ ամենէն, գերազանցութիւն իր լոյս հաւատքին, իր առաքինի և աշխատասէր բարքին, իր նաւնախին:

Կը յիշեմ Քղիցի Հայ ազգայ մը 11 տարու իր կլոր թուիս դէմքով և աղու սեւ աչքերով, որ նոր եկեր էր իր երկրէն Պօլիս, հօրեղորօր քով որ խոհաբար էր տան մը մէջ:

— Ինչո՞ւ ձգեր ես երկիրդ ու հոս եկեր, խոհաբար մըն ալ դուն ըլլալու համար:

— Ի՞նչ ընինք, աղա՛, մեր երկիր մնանք Քիւրտ կայ՝ կուգայ կը տանի՛ մեր ունեցած կը գողնայ:

— Դուք ալ անորը գողցէք:

Երբէք չպիտի մոռնամ տղուն դէմքին խրոխտ արտայայտութիւնը ու իր արհամարհոտ շեշտը երբ զլուխը վեր բռնելով համարձակ պատասխանեց.

— Հայ չգողնար, Հայ նամուս ունի: . . .

Ն Ա Հ Ա Պ Ե Տ

ՄԵՆԾ ԱՂԱ

Երեկ գիշեր, քունիս մէջ, էն մեծ, էն թանկագին երջանկութիւնը ունեցայ:

Բարի ու մայրական երազ մը կաշխատէր համոզել զիս, քունիս մէջ, որ մենծ աղա մըն էի:

Մտքի դարմանալի վիճակ մըն էր: Եսս կրկնուած էր: Երկու ուղեղով կը մտածէի ու կը զգայի փոխ ընդ փոխ: Ասիկա շատ նոր հոգեբանական երեւոյթ մըն է որուն վրայ երկայն ու հմտալից ուսումնասիրութիւն մը պարաստելու վրայ եմ «Անահիտ» ընթերցողներուն համար:

Ե՛ս մենծ աղա մը. կը վարանէի հաստալու: Բայց գոբովագին ու բարի երազը արդէն գինովցուցած էր զիս բոլոր քաղցր փառքովը իմ նոր տխրոսիս:

Ու ազապոյցները, երջանկութեանս ապացոյցները արդէն շատ համոզելի էին: Սկսած էի ստակին յարզը, ստակին փառքն ու տարփանքը ամբողջապէս զգալ: Փայլուն, ազուոր ոսկիներուն զպչելով մատներս կը սարսոռային յուզումէ, հեշտանքէ: Արդէն վրաս եկած էր հպարտութիւնը աշնուական ու վրասեմ ազահութիւններուն:

Ու անհուն արգահատանք մը կը բարձրանար հոգիիս մէջ խեղճ մտքի մարդերուն համար, երեւակայութեան պատրանքներուն մէջ թախտայած ցնորքի եւ յուզումի էակներուն համար:

Այն բարձունքէն ուր կը գտնէի ինքզինքս, ոսկի գէզիս կըթնած, կըմբռնէի անխմաստութիւնը, ունայնութիւնը բոլոր մտածութիւններուն, ու արմար երազողները զիս կը նեղացնէին:

Ու անոնք էին դուրսէն անցնողները: Լոյսի առատ ըզիսումի մը տակ ճառագայթող փարթամ սեղանիս առջև նստած, պատուհանէս, թաւիշ վարագոյրներուն բեհեղին մէջէն, կը սեւնէի խօլական թափօրը: Պարզապէս ծիծաղելի էին, ա՛յնչափ ծիծաղելի որ ամբողջ փորովս կը խնդայի: Երկայն մաղեր ունէին ու, լուսնկային մէջ, թեթեւ հով մը կը տարուբերէր զանոնք: Անժպիտ, զարմացած

ու երջանիկ աչքեր ունէին, ու խորունկ, յսուած նայուածք մ: միջոցին մէջ կորուած: Իրենց երազովը հպարտացած չեմ գիտեր ուր կերթային այսպէս, անխօս, գիշերուան ճերմակ պայծառութեան մէջ, — անանկ լուրջ դէմք մը ունէին սակայն այս խենդերը որ նորէն չկրցայ փորիս խնդուքը զսպել:

* *

Եւ ահա յանկարծ, այս երկայն թափօրին մէջտեղէն, բաց գահաւորակի մը վրայ կանգուն, զոր ուսերնուն վրայ առած կը տանէին երեցաւ հազուադիւս գեղեցիկութեամբ աղջիկ մը:

Ան ի՛նչ աշնուական գեղեցիկութեամբ աղջիկ մըն էր: Պաշտելի նրբութեամբ, նեղաչնակ ու սլացիկ հասակով աղջիկ մը: Խարտաշ մազեր ունէր, որոնց ալիքները կիջնային իր ուսերէն վար: Գիշ մը ետեւ ինկած, երազուած ազուորութեամբ զլուս մըն էր ան, հին, հին, շատ հին, ոսկեղէն առասպելներու մէջ ընդնշմարուած գլուխներէն: Ճերմակ, գծագոյն դէմք մը ունէր, անպատում քաղցրութեամբ, հպարտ, վերաւոր չթեւեռներով, ու աչքերուն մէջէն, որոնց վրայ իր արտեւանունքներուն յոգնած ու յուսահատ մեղամաղձութիւնը կը ծանրանը, իր աչքերուն մէջէն լուսաւոր ծովեր կանցնէին, կապոյտ, լուսաւոր ծովեր:

Հոյակապ լանջքը կամբռնար ամուր ու հարուստ, ու իր ազդերուն հուժկու գեղեցիկութիւնը կը մտնուէր խռովիչ ծալքերէն իր երազի գոյն շրջազգեսախին:

Իր ազուոր ու յուսահատ աչքերէն, իր մաղերուն խունկ շրջանակէն, իր ամբողջ մարմինէն կապոյտ անուշահոտութիւն մը կը ծաւալէր:

Սպասաւորը զրկեցի, ու հասկցայ որ այս աղջիկը մայրն է եղեր բոլոր այն խենդերուն, — Արուեստը:

Ու երկրորդ եսս մտիկ կընէր ծառային որ կը շարունակէր.

— Պօյու, բօսու աղէկ, աղա, Ֆրեսաթ կաղմուածքը զայիֆ կերուայ կոր:

Իրաւունք ունէր սպասաւորս: Վայրկեան մը սա տարօրինակ աչքերուն կախար-

զուժիւնը ազգեց վրաս: Բայց չէ՛, կարմրուկ,
թօմսուլիկ կնիկ մը պէտք է ինձի: Եւ յետոյ,
վերջապէս կուզեմ կնիկ մը որ ուզած ատենս
խնամ արայրջը ալ, ըսնանս սօրնարը ալ եփել
գիտնայ:

Այս միջոցիս երազիս մէջ միջնարար մը
անցած ըլլալու է, որովհետեւ երբ նորէն կը
շարունակէի, քունիս մէջ, մենձ աղա ըլլալ,
զիս հոգարարձու բնարած էին:

Ամուսնութիւս ալ մտնեցած էր: Տասնի
չափ ընտրելի հարս ունէի, ամենքն ալ պատ-
րաստուած զիս խենդի պէս սիրելու: Օ՛, ասոնց
աչքերը կը հասկնայի: Մարդկային աչքեր
էին, տարօրինակ բաներով լեցուն չէին, — ու
զէմբերնուն վրան ալ գոյն կար: Եւ յետոյ,
զիս չպիտի արհամարհէին, գիտեմ:

Ու նորէն գուրգուրանքով յիշեցի ոս-
կիններուս անուշ գէղը:

Որովհետեւ, խօսքը մէջերնիս, գահաու-
րակին ազդիկը զիս վախցուցած էր: Անոր
խորիս գեղեցկութեանը առջեւ ոտուրները
անգամ համբուրել չպիտի համարձակէի:

Երբ քունէս արթնցայ, այնչափ խո-
րունկ եղած էր երազս ու այնչափ անհեղեթ,
որ քանի մը վայրկեան տեսց, մինչեւ որ
ինքզինքս գտայ: Ես որ այնչափ տարուան
մենձ աղա մըն եմ, ի՞նչպէս կըցայ, երազիս
մէջ, ատոր վրայ տարակուսիլ, չեմ գիտեր:
Մանաւանդ չկըցայ խնդուքս գազել ամուսնու-
թեան կէտը յիշելով, ես որ կնիկի ու վեց
գաւկի ատէր եմ:

ՇԱՅԼՕԲ

ԱԼԻՔՆԵՐ

Գորշ ալիքները սս ծովուն
Ռոնիք երկար, խուշ հաւերգով
Մը կը ծեծեն գիշերն իբուն
Խարակներն այն անկողնով,

Յանախ գգուանի կըչքս ու ցօղ
Հաւոյր կործիկն մերի ժայռերուն
Ի իրենց մըռունցն ըսպտեացող
Միտոյ երգ մը որ ըսյ հեռուն:

Տրտնութեան ը՛տ, քա՛նար ալիքներ
Ռը, խո՛ւր, կուգաք բաղիւի խրոսով
Մրիս — խարակ, ծեր, մահասուներ—

Օ՛հ, կարմիր եփ դոմ ալիքներ,
Ձեր վրայ միշտ կը փչէ հով
Դոմ օր մ՛, օր մը զիս յեփ գգուեր:
Ս Ա Վ Ի Թ Ր Ի

ԿԵԱՆՔ ՄԸ

Ուղիւն անհարկ կ'երկարի կանարներու սակ մըրիկն,
Մարդիկ կ'անցնին անշըշուկ ինփրեկց մեջ ան-
փոփոսած. [վառիկն.

Կիսասուերիկն մեջ հոս հոն աղոս ըստեր կը
Ու կը փաշե ան միկնակ, կը փաշե ան յաներկաց
Կեանքի ճաւերուն մեջ անհարկ, կանարներու սակ
մըրիկն:

Ձը ճանչցուած դիմակներ փոյկն կ'անցնին
անսարքեր, [ուսմէներ.

Այգերուն մեջ կը նային չը հասկցուած նայ-
Ու Ձեր կ'անցնի կ'երթայ ու նայուածքը կը մարի-
Ու կը փաշե ան նորեն միկնչեռ առանց դարարի
Ձը ճանչցուած դիմակներ փոյկն կանցնին
անսարքեր:

Երբեմն ըսուեր մը ըստ ըսուերի պես վաղակցիկ
Այգերուն մեջ կը վառե յոյսի ցոյտեր ժպտուն,
Բայց տեսիլը կ'արուի ու հոգիկն մեջ մեկիկ
Մպաստունն աղ անշի կը մուսյի միշտ նրկուն
Երբ տեսիլը կ'անհետի ըսուերի պես վաղակցիկ:

Օրը օրին ետեւն կը քաւային սարիկեր
Ու աղ չի գար անիկա. քերեւս անցաւ անծանօթ
Դիմակիկն սակ ուր այգերն սպաստունե արցունկոս
Միայն դիմակը տեսն ու երազը կը ծածկեր,
Օրը օրին ետեւն կը քաւային սարիկեր:

Ճակասն ինչ շուս կ'ակոսուի, փոսը ինչ շուս կը
փորուի, [գայն.

Միայն յոյսը չը մեռնիր շարչկերու հաւար
Արցունկներէ խաւարած նայուածներով կը յառի
Ըսուերներուն որ անվերջ խաւարին մեջ կը
դառնան: [փորուի:

Ճակասը շուս կ'ակոսուի ու փոսը շուս կը

Ուղիւն անհարկ կ'երկարի կանարներու սակ մըրիկն,
Մարդիկ կ'անցնին անշըշուկ ինփրեկց մեջ ան-
փոփոսած.

Մեկիկ մեկիկ մուրիկն մեջ ըսպտերեկը կը մարիկն.
Ու կը փաշե ան նորեն, միշտ կը փաշե յաներկաց
Կեանքի ճաւերունե շանհարկանարներուսակմըրիկն-

Ս Ա Ր Տ Ս Ի Ա Ձ Դ

ՄԵՐ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԸ

Երեք տարիէ ի վեր Հայ ժողովուրդը կանցնէ իր պատմութեան էն ողբերգական օրերը: Երբէք, նոյն իսկ հին տիրապետումներու եւ բարբարոս արշաւանքներու աղէտքներէն, մեր երկիրը չընկճուեցաւ այսքան մահացու անձկութիւնով:

Յաջորդական անկումներու շարք մըն է ուր սոսկումով միայն կրնանք անդրադառնալ. ահռելի ճակատագրութիւն մը որ կը սպաննէ ազգային կորովի ամէն արտայայտութիւն: Երեք տարիէ ի վեր արիւնը հեղեղներով հոսեցաւ մեր գիւղերուն եւ քաղաքներուն մէջ, ու աւերակ դարձած հողերու վրայ, գիակներու շարաշուք կոյտեր բարձրացան: Հոն ուր Հայ անհատներ ունէին միութեան կապ մը, անսանձ հրտաակներ իրականացուցին հրամայուած քանդումի գործը, գաշուներով մեր այրերը, բռնաբարելով մեր կիները, աւարելով մեր սուները եւ դաշտերը: Հայ հարուստին վաճառականութիւնը, Հայ ազգատին երկրագործութիւնը, ամբողջ ազգի մը բարոյական եւ նիւթական կեանքը կործանած կը գաննէք այսօր: Հազարաւոր քաղաքացիներ, ստիպուած ինքզինքնին տարագրել աշխարհիս մէկ մէկ անկիւնը, անօթի եւ թափառական կը սպասեն անկարելի փրկութիւններու:

Եթէ այս վարկեանիս կրնանք պաղարիւն կերպով մտածել ու եթէ փնտուել ուզենք պատասխանատուութիւնը բոլոր այս ահռելի փորձանքներուն որոնք մեզի սպաննութիւններու շրջան մը ստեղծելէ ետքը, երկայն տարիներով ետ ընկրկեցին ազգային վերածնութեան յոյսը, պիտի գտնանք մեր առջեւ մեր մեծագոյն թշնամին, ո՛չ թէ Սուլթանը իր մուկուանդ գինուորներով, այլ մանաւանդ անոնք որոնց վստահեցանք մեր փրկութեան ղէկը, մեր քաղաքական կուսակցութիւնները, մեր հովիւներն իսկ:

Մահուան եւ աւերումի այս հրէշային յաղթանակը, չվարանինք բարձրաձայն յայտարարելու որովհետեւ խղճի պարտք մըն է մեզի, մեր յեղափոխականներուն գործն է:

* * *

Սխալ եւ անարժան ըն մը պիտի ըլլար յարձակիլ յեղափոխութեան գաղափարին դէմ: Յեղափոխութիւնը՝ ինքն իր մէջ նկատուած, այսինքն լաւագոյնին ձգտելու եռանդը, միշտ պիտի մնայ ժողովուրդի մը էն ազնիւ նկարագիրը: Վերջին դէպքերը իրենց բարոյական ամբողջութեանը մէջ տեսնալով, իրաւունք ունինք անտարակոյս հպարտանալու, քանի որ դարերու ստրկութիւններէ եւ անտարբերութիւններէ ետքը, գիտակցութիւնը ունեցանք վերջապէս մեր ցաւերուն, քանի որ, լեցուած արդարութեան ծարաւովը, ուզեցինք ընդգլխիլ անասնական ուժին դէմ:

Գաղափարի մը ճշդութիւնը չի բաւեր սակայն իր յաղթանակին համար: Եթէ այդպէս չըլլար, ցաւերը իսպառ անհետացած պիտի ըլլային մարդերուն ճակատագրէն: Դեռ Ուժն է, աւա՛ղ, որ կառաջնորդէ աշխարհքը, ու մեր գոյութիւններուն վրայ դեռ կը ճնշէ զօրաւորագոյնին իրաւունքը:

Այս ճշմարտութեան հասկացողութիւնը ընկերային իմաստասիրութեան սկիզբն է:

Անիկա որ կուզէ բազմութեան խառնուել արգասաւորելու համար գեղեցիկ մտածումներ, պէտք է, ամէն բանէ առաջ, ըմբռնէ այն պայմանները որոնք արգելքներ կամ նըպաստներ պիտի ըլլան՝ հասնելու համար իր նպատակին: Երբոր յեղափոխութիւն մը արդիւնք պիտի ունենայ միմիայն ազգի մը մահը, երբոր ո՛չ մէկ հատուցում պիտի վարձատրէ մեր գոհողութիւնները ու փոխանակ հասնելու ընկերական աւելի երջանիկ վիճակի մը, աւելի սեղմուած պիտի զգանք գերութեան շղթան մեր վիզին շուրջը, որքան որ գեղեցիկ ըլլան սկզբունքի մը համար անշահախնդիր ու անկեղծ մահերը, դատապարտելի են միշտ:

Անով մանաւանդ դատապարտելի են մեր մէջ, որ խնայելով ուժերու այդ անօգուտ սպառումը ու տակաւին աւելի զօրայնելով մեզի, պիտի կարենայինք թերեւս, սպառաջին, աւելի բարեացակամ պայմաններով, հասնիլ երջանիկ իրականութիւններու:

Տրտում բան մըն է ստիպուած ըլլալ այս խօսքերը ըսել: Բայց մեր ներկայ բարօրութեան, մեր սպառաջին սիրուն համար, պէտք է ընտրենք երկու շարիքներուն փոքրագոյնը:

Ալ բաւական են անօգուտ մահերը:

Ահաւասիկ ինչ որ երբէք չը հասկցան մեզի առաջնորդողները: Տասնեակ մը տարիներէ ի վեր, անոնք նպատակ ըրած են իրենց գրգռել ու խանդավարել ժողովուրդը, ազատութեան մեծազորդ խոստումներով: Սկիզբները գեղեցիկ ու արգարանալի էր ասիկա քանի որ մենք ոչ ոք կրնար գուշակել այս շարժումին վերջնական արդիւնքը, ու միշտ յոյս մը կը մնար մեզի, բայց երբ կրկնուած անյաջողութիւններէ ետքը, երբ մանաւանդ մեր մարտիրոսութիւններուն առջև. ամբողջ աշխարհիս անտարբերութեան ապացոյցը ունենալնէս ետքը, յեղափոխականներ համարձակեցան զինուած բողոքել իրերու վիճակին դէմ, այդ օրէն իրենց գործը Ռճիրի մը վերածուեցաւ:



1895 Սեպտեմբերին, գաւառացի արհեստաւորներէ մանաւանդ բազկացած հայերու խումբ մը, Ստամբուլի փողոցներուն մէջ քաղաքական առաջին կարեւոր ցոյցը ըրաւ: Երգելով ու խնդալով կերթային մեռնելու: Իրենց առաջին զոհերը իրենք եղան: Այդ ցոյցէն ետքը ու այդ ցոյցին համար, անմինջապէս բացուեցաւ ջարդերու թուականը: Սուլթանը կանոնաւոր կերպով գործադրեց իր ըսպաննութիւններու յատակադիժը: Մեր խնդրանքներուն իր միակ պատասխանը եղաւ ասիկա: Հակառակ իր բոլոր տկարութեան, թուրք կառավարութիւնը կրցաւ սքանչելի կերպով մատին վրան խաղցնել Եւրոպայի վեց մեծ պետութիւնները՝ որոնց վրայ այնքան յոյսեր դրած էինք: Ասոնք կեղծաւոր արգահատանքէ մը աւելի չունեցան մեզի համար: Կը ծանրանամ այս կէտին վրայ որովհետեւ պէտք էր մեզի ըլլալը մեծ դաս մը ու առաջնորդ մը գալիք ուղղութիւններուն:

Դիմակները ալ պատռուած էին ամբողջ ասոր իւրեւ ապացոյց չեն պակսիր նախարարական յայտարարութիւններ: Պէտք չէր այլևս բան մը սպասել պաշտօնական Եւրոպայէն: Օտարին օգնութիւնը անկարելի էր մեզի, ու պէտք էր հրաժարէինք մեր երազներէն:

Անսպասելի եւ անհասկնալի բան մը եղաւ. երբ հետեւեալ տարին Օսմանեան Պան-

քալին մէջ յանկարծ պայթեցաւ երկրորդ ցոյցը: Ապշեցուցիչ է տեսնել այսքան անգիտակցութիւն մեր ինքզինքնին հայրենասէր կոչող յեղափոխականներուն քով: Մարդ կը դողայ երբ կը խորհի թէ քանի մը յիմարներու խումբ մը, ինք իր գլխին գործելով, կրցաւ այսպէս իրականացնել մեր գրեթէ վերջնական կործանումը . . . :

Այս անգամ աններելի անդամութիւն մը գործուեցաւ, ու Բարիաններու եւ Արտաշէսներու փառաւոր մահերը չեն որ չքմեղանք մը պիտի ըլլան անոր: Ի՞նչպէս կարելի էր խորհիլ թէ Եւրոպան որ մինչեւ հիմա երեսը դարձուցած էր մեզի, պիտի միջամտէր մեզի ի նպատակ: Ի՞նչպէս կարելի էր խորհիլ թէ Սուլթանը՝ տեղի սալով քանի մը ռումբերու՝ պիտի գործադրէր իր բարենորոգումները:

Տեսնելէ առաջ այս գործը որ ամբողջ ազգին անունովը պիտի ըլլար, պէտք էր խորհուրդ հարցնել հանրային կարծիքին: Կը զգուշացնեմ մեր յեղափոխականները ինծի ցուցնել Հայ մը՝ որ մոլեռանդ կուսակցական մը չըլլալով համակիր ըլլայ իրենց արարքին:

Եւ ոչ միայն չունեցան այս տարրական պարկեշտութիւնը, այլ եւ ոչ իսկ նախազէս զգացուցին իրենց նպատակը մեր ժողովուրդին: Լուռ եւ գաղտնապահ սենեակի մը մէջ, այս պարոնները որոշեցին ամէն բան: Օր մը առաջ անոնք որ պիտի չը մասնակցէին շարժումին խոհեմօրէն կը փրկէին իրենց անձերը, կամաց մը փախչելով Պօլիսէն: Նօթի առնէնք այս պատիկ կէտը չը մոռնալու համար իրենց մեծ քաջութիւնը: Նուազ բազաւոր եղան անշուշտ Պանքալին մէջը գանուողները, քանի որ պէտք եղաւ իրենց քանի մը օր սպասել, իրենց կարգին շոգենաւ մտնելու համար,

Եւ երեք հազար դիակ՝ Պօլսոյ փողոցներուն մէջ:



Ո՛չ մէկ ազգի յեղափոխական պատմութեանը մէջ կարելի է գտնալ այսքան ապականութիւն: Տեսէ՛ք սա մարդիկը որ իրենց ձեռքին մէջ կը բռնեն միլիօնաւոր էակներու ճակատագիրը ու անկարող՝ վարկեան մը հասկընալու ահռելի պտտասխանատուութիւնը որ կը ծանրանայ իրենց վրայ, չեն վարանիր

գործելու էն գէշ ծայրահեղութիւնները: Ասոնց կեանքերը շարունակական պղծումներ են բու- լոր սկզբունքներուն զորս կը յաւակնին պաշ- տպանել եւ որոնք, իրականութեան մէջ, պա- տրուակներ միայն կըլլան շահագործելու հա- մար ազգի մը պարզմտութիւնը:

Քանի մը խումբեր են այսօր մեր գըլ- խուն, ամենքն ալ հաւասարապէս անպատիւ, ամենքն ալ իրարու թշնամի: Զիրար բռնաբա- համար, կատաղօրէն ծուղակներ կը լարեն իրարու դէմ: Ասոնց գոյութիւնը մեծագոյն ազեպքը պիտի մնայ Հայ ազգին, ու շատ աւել- լի վտանգաւոր քան թէ բոլոր Սուլթաննե- րուն ջարդերը, որովհետեւ իրենց երկպառա- կութիւնները տարածուելով ամբողջ ազգին մէջ, կը ստեղծեն մեր ներքին կործանումը:

Այս հասարակաց տրամութեան օրերուն մէջ, ուր ամենքս պէտք էր իրարու քով սեղ- մուէինք, տեսէ՛ք ի՞նչ գայթակղութեան տե- սարաններ կ'ընծայենք օտարին: Մասնու- թիւնը եւ զաւարտութիւնը ամէն տեղ են: Գարշելի յոխորտանքներու ետին, կը պահուը- տին անձնական կիրքերը: Հայրենասիրական քարոզներու երեւոյթին տակ, կը զգացուի թոյնը սուտերու եւ նենգամիտ ակնարկու- թիւններու:

Որովհետեւ երբէք ազգային բարօրու- թիւնը չէ այս մարդերուն նպատակը: Ո՛չ, ասոնք ուրիշ բանի կը հետապնդին: Իրենց ի՞նչ փոյթ ժողովուրդին շահը, ի՞նչ փոյթ թէ իրենց պատճառով ամբողջ ազգ մը կը քալէ ջնջումի անդառնալի ճամբուն մէջ: Ինչ որ կը փափաքին, ինչ որ միայն կը շահագործէ զի- րենք, իրենց բարօրութիւնն է, իրենց անմի- ջական օգուտները:

Յեղափոխութիւնը վերածուած է այսօր մեր մէջ հասարակ արհեստի մը, ու մարդ յե- դափոխական է ինչպէս կըլլայ կոշկակար կամ նալարալաճառ: Անիկա բազմախնդիրներու գե- րագոյն ապաւէնը կը դառնայ այսօր:

Հայրենասերի անուն մը չի՛նել, ի՞նչ ե- րազ: Եւրոպական կեդրոնի մը մէջ ապրել, հե- ոու Տաճկաստանի վտանգներէն, եզատ ու եր- ջանիկ: Ու Հայ ժողովուրդին քրտինքովը ա- պահովուած կեանքի մը փոխարէն՝ շաբաթը անգամ մը կրկնել թէ քանի մը օրէն Հա- յաստանը պիտի փրկեն, թէ վաղը՝ նահապակ-

ներու արիւնը պիտի վերակենդանացնէ աւե- րակները իրենց մոխիրներէն:

* * *

Որո՞նք են այս մարդիկը. ո՞ւսկից կու- գան, ի՞նչ հեղինակութիւն ունին, ի՞նչ մեծ արժանիքի ապացոյցը առած են արդեօք ինքզինքնին անպատկառօրէն առաջնորդը ե- րեւակայելու համար ամբողջ ազգի մը:

Խօսեցէ՛ք անոնցմէ մէկ քանիին հետ: Տասը ժամ վիճարանութենէ ետքը պիտի չը կրնաք ուրիշ բան հասկնալ բայց միայն թէ ընկերակարականի մը զինացը կը գանուիք, որ անպատճառ Գերմանիոյ կամ Զուլցերիոյ մէջ ուսում առած ըլլայ: Ու մեր պարոնը ձեզի պիտի ուզէ անմիջապէս ապացուցանել, պաղարիւն լրբութիւնով մը, թէ Հայաստա- նի փրկութիւնը քանի մը ժամուան զործ է միայն . . . :

* * *

Եթէ Հայ ժողովուրդը կուզէ լուծեան եւ ինքնամիտիւմի մէջ, աշխատիլ իր բարո- յական եւ նիւթական վերածնութեան, եթէ կուզէ, շուարումի այս ցաւազին օրերէն ետքը, վերաշինել իր ազգային կեանքը զոր ազի- կար ձեռքեր պղծեցին, եթէ գլխակցութիւնը ունի իր ճշմարիտ շահերուն եւ զլաէ ո- լոշել իր շուրջը բարձրացող ձայներուն մէջէն անոնք որոնց աշխու- թիւնը եւ անշահախըն- զրութիւնը անկասկած է, պէտք է որ, ասոնց վայրկեան մը կորսնցնելու, իր ծոցէն դուրս վռնտէ բոլոր այս գէշ հովիւները, այս կեղծ հերոսները, այս անկարող յաւակնոտները:

Այսպէսով ընտրած պիտի ըլլայ երկու չարիքներէն անհունապէս փոքրագոյնը, ու իր ամբողջական յաղթանակին համար՝ պիտի կարենայ աներկիւղ ապասել լաւագոյն վարչ- կեաններու:

Ա.Ռ.Ա.ԲԵՂ, ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՆԱԲԱԿԸ

Մարևարայի մեկ եզերքը փորձած հողերի ու մաշուած ժայռերի ափումք վը կերկնևար: Գրեթե անայի բարձր դաշտեր էին, բարևեր անելի որովք ջարտերուն մտակումեն փոստրուերով խոտոցներ բացած էին իրենց կուրծքին մեջ եւ հեզգնեճե մաշուերով կետերնին կորսնցուցած էին:

Դեղին, պզտիկ ժայռեր կը գցուէին, ու ասոնց սեղմումեն վճիտ եւ անզոյն սեզեր, անդերուն մեջէն բուսներով՝ բույցած կիչնային եւ անոնց ստուերը երկննայով փարտուն անկիւն վըրայ իրենց մուրովը խորշուններ կը գծէին:

Գիշերները մանասանդ մուրին մեջ անարկաները կանոնոշնային եւ ժայռերը սեւը պատնեղով իրենց դեղին անկասը կը գցէին, երբ ոչ մեկ բզզիւն, ոչ մեկ շարժում չէր ըսներ:

Անստուան մուր իրիկուն մըն էր: Ծովը գորշ կապտորակ կը փայտիլար սեւ շրարչի մը ետեւէն նայող կապոյտ այգերու պէս. կոհակներու անվերջանայի շարքեր կը սոյանցէին կակուղ մարմիններու պէս:

Ասիմեքը հարած մուրին մեջ եւ սահմանը հորիզոնին հետ խառնուերով, արուած անհուն ցրեղէն սարածոքին մը կը բուեր:

Երկայն նաւակին մեկ անկիւնը անգիտակից յուզումներով լեցումած մուրը կը դիտէի: Չէիմք խօսեր: Չայն չիար: Միևնակ կը ըսէի քիակներուն միտրինակ ծափը ջարտերուն յատ բարումին մեջին:

Դող մը, քիթունիկի քեւերու յոգնած հեւք մը կը սարսուար եւ կեանք կուտար միջոցին մեջ փրփրող սեւին եւ մուրի պղպջակներ կը բուսաչէին երազի պէս քեթե՛ իրենցմէ արտաշնչերով սեւակ մը հանդարտ փայտուք:

Ճուրտ հով մը հասուցի մը պէս կանցներ, եւ օդը կը սուրնար, կ'աւսնեճեր ու մուրը կը սկրդեր կարծես իր շիտունին սակ:

Մուրի հիւսկեկնին մեջէն սեւեւէր կը կարծէի անելի մուր անպեր իրենց սահմանովը միայն զգայի, որովք երազներու պէս կը վրդովէին հաստատոքինը:

Ու անբողջ շրջանակը սարօրինապէս հիւանայի՝ կարծես անշարժացած երազ մըն էր:

Կուզէի բոլորովին միևնակ ըլլալ իմ երազ-

ներուս կծիկին հետ որ կը փակուեր հեզգնեճե, միևնակ մուրին, սարսուարին, եւ անակնկալին յուզումին մեջ, մեկաւորիկ ինքս իմ մեջս, իմ հոգիս մեջ:

Սահեի, անցնէի անշշուկ, չիտնչեցներու հաւար Սեւին բնակիչները. սեւեւի, զգայի շուրջս օդէն քեթե՛ր հակներու շունչը. ըսէի յատ միտրումը անոնց ջարտերուն ծոցին մեջ, ու անոնցմէ ելած երգը, քեթե՛ր, բախակցիկ, անզգայի:

Նաւակը անդիմ միշտ մուրը, ու սա անբաս կախեճեճեճե ըլլար:

Այ չսեւեւի աղբաւուղջին փակուելիք յոյսին սոցեւ, աչ չսեւեւի ստ հակներուն անեւցումը, չսեւեւի օդին անմեկնայը, ու սեւ սեղմուքի պէս ծովուն կապուեճայը: Ճերմակ բոցաններ չկրդովիին միջոցին ըսյն անբոքոքիւնը, սեւ ու գորշ անպեր չարծէին անծայ կտար երկիւնքին, աչ ոչ մեկ բան չիտխուեր, ոչ մեկ բան չըսուեր:

Ու միշտ եւ նաւակիս մեջ, իտկմունքներովս հոգիացած, շարունակի մանքաս ու նաւակիս երթիք ափումքի մը չկապուեր, ու Սեւի եակներու բախոր մը զիս երազում աշխարհ մը սսներ ուր չհասնէիմք երթիք . . . :

ՉԱԿԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԱՍՈՒՊՆԵՐ

Աշխարհներ են, իրենց անմեկն շեղած:

Շղթայէն անցանում օղակներ որովք հոս հոն կը գտնուին:

Աշխարհներ էին որոնց փայտները մեյրեկ Սոդոմ ու Գոմորներ դարձան:

Ու անոնց մեղքին հաւար Աստուած պատճեց զանոնք. իր շունչը չիչեց ա՛յ անոնց վրայ. իր մասին մղումը զբացաւ անոնց եւ դուրս ինկա՛ն ներդաշնակ զնայցէն:

. . . Դիտու պտոյտ բունում աշխարհներ, ինկի՛ք, ինկի՛ք մուր երկնքին մեջ:

Գահագուրկ արքաներ, գրոյսնիդ վար, նեճեճեճեք, նեճեճեճեք ծովին մեջ:

Գիւնով աղջիկներ, խնդարով վազեցիք, վազեցիք մաշքին վրայ:

Թեքե՛ր փոստուայներ, սահեցիք, սահեցիք խաւարին ծառերուն մեջէն . . . :

ՎԱՀԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

ԽՆՈՒ ՄԸ

Այս Խընոն շալվար չունի: Չեմ գիտեր հիմա ի՞նչ հանդերձի տակ կը շրջի Վառնաի փողոցներուն մէջ: Պօլիս սերրի-բանթօզ կը հագնէր, գլխուն վրայ՝ գլանածեւ անասման փեսով մը զոր անդադար քիթին վրայ կը բերէր, յաղթական հարուածով մը ուր իր հինգ մասները կը հերոսանային, ու քիթէն՝ իր ճաղատ գանկին ետեւը կը նետէր, իր գրական խանդավառութեան օրերուն — ամէն օր:

Որովհետեւ — հրէշային գիպուած — այս Խընոն գրագէտ մըն է ու գրագէտ մը որ մեր աշխարհարար գրականութեան մէկ երկու էն ազոր էջերէն ստորագրեց:

Ղալաթիոյ եկեղեցիին ժամկոչներէն աւելի տգէտ՝ Ղալաթիոյ կեդ. վարժարանին գրականութեան դասատուն եղաւ օր մը:

Իր աշակերտներէն մէկը նկատէի թերեւս ինքզինքս, եթէ իրեն պատիւը ըրած ըլլայի — ու ասիկա իմ դպրոցականի հպարտութիւններէս մէկը կը սեպեմ — գոնէ անգամ մը պարտականութիւնս գրելու ու գոնէ անգամ մը իր փառաւոր զերօին — իմ ամբողջ ուզածս — արժանացած չըլլալու, — ե՛ս, դասարանին է՛ն գրագէտ տղան որ, այդ տիրացուութեան շրջանին, առկին անդին թափթփուկ թերթերու մէջ, ոտանաւորներ (°°) գրած ըլլալ կը կասկածուէի ընկերներէս:

Այս մարդը ամէն անգամ որ, Ռաֆիի հատոր մը թեւին տակ (այդպէս Իւսկիւտարէն մինչեւ Ղալաթիայ գալ համարձակելուն՝ պատերազմ մը շահելէ դարձող զօրավարէ մը աւելի հպարտ) ներս կը մտնէր դասարանէն ու հինգ անգամ փեսը քիթին վրայ բերելով՝ վիզին վրայ նետելէն վերջը, տեղը կը հասնէր, եւ գլուխս կը կախէի դարակիս մէջ ու կը շարունակէի՝ քիմիագիտութեան կամ աշխարհի դասին ընդհատուած՝ ընթերցումը սիրուած հատորի մը զոր ամէն օր հետս կը բերէի, դուրոցին տնօրէնին, Պ. Մոստիշեանի գրադարանը հարստացնելու վեհանձն կանխամտածութեամբը:

Եւ սակայն երբեմն այս համակրելի վարժապետին ահարկու վանկերը զիս տեղէս վեր կը ցատկեցնէին ու ընթերցմանս միամիտ յափշտակութեանը մէջ վիրաւորուած, ծիծաղելի սրտմտութեամբ մը մտիկ կընէի իրեն, քանի մը վայրկեան:

Գիտէ՞ք ինչ կըսէր:

— Կարդացի՞ք, տղաք, կարդացի՞ք այս ատուտան Հայրենիքը... ազուոր էր հէ՞... հա՛, հա՛, հա՛... :

Ու գինովցած իր փառքին մէջ, չբիմանալով անգամ մըն ալ իր յօդուածը տըլուած տեսնալու հեշտանքին, դողդաղացող մատներով (որոնք սակայն համակ սպառնալիք կըլլային, երբ իր փեսին հետ էր գործը... օ՛հ, այդ մասներուն հայրենասիրութիւնը...) գրպանէն կը հանէր Հայրենիքը ու ամենուս արդէն ծանօթ յօդուածը՝ անգամ մըն ալ իր բերնէն լսելու զուարճալի տանջանքին կը հարկադրուէինք:

Օ՛հ, տեսնալու, լսելու բան էր իր կարգալու եղանակը. բառերը դանդաղօրէն, գրեթէ խնայելով կարտասանէր ամէն մէկ վանկին վայրագ ցոփութեամբ մը կոխելով:

Ու երբ ընթերցումը աւարտէր, նորէն վրանիս սեւեռելով՝ յուզումէն արիւնոտած իր աչքերը — որոնք սպառնալից ու եղբրական արտայայտութիւն մը կառնէին այդ պահուն — կը պոռար.

— Ազուոր է հէ՞... :

Ու մեղմացնելով ձայնը՝

— Գիտի գրե՛մ, պիտի գրե՛մ... :

Դա՛ս տալ: Այս մարդը անանկ բան չէր գիտեր. Ազքանագներու ու Պէրպերեաններու գործն էր ատիկա, եւ ինքը գերագոյն արհամարհանքի ժպիտով մը կարտասանէր այդ համեստ անունները: Իր ներկայութիւնը չէ՞ր բաւեր մեզի. գա՛ր, երեւա՛ր, փեսին հետ կըուէր, խնդա՛ր, պոռա՛ր ու մեկնէր, — ահա ձեզի հոյակապ գրականութեան դաս մը: Հաղու երբեմն, եթէ իր յօդուածները մոտնար, մեզի կը կարդար քանի մը էջ Ռաֆիէն կամ ուրիշ գրեթէ միշտ Ռուսահայ գրողէ մը, որ անպատճառ «խոչ՛որ համալսարանական» մըն էր, ինչպէս կըսէր հիացումի այլանդակ շարժումներով:

Դաս չէր անցներ սակայն որ մեզի իր պաշտօնակիրներէն ու գրական բարեկամներէն

մէկ երկուքին խօսքը չընէր: Սիրուած անուններ էին զորս մեզի կը կրկնէր, ու մեր դպրոցականի անհանգիստ հետաքրքրութիւնը չէր յազենար լսելով ծանօթ գրողներու կեանքէն մանրամասնութիւններ:

Ասոնց մէջ առաջին տեղը կը բռնէր Արփիարը որ իր է՛ն մտերիմ ու է՛ն սիրական բարեկամը կը թուէր մեզի ըլլալ, այնքան ակներեւ խանդաղատանքով կարտասանէր այդ անունը, ու իր անկեղծութեանը անկարելի էր տարակուսիլ երբ ծիծաղելի փղծկումներով սապէս բաներ կըսէր մեզի:

— Մ՛խ, աչքը սիրեմ Արփիարիս, եթէ շաբաթը անդամ մը չը կրնամ զինքը համբուրել, պարզապէս անհանգիստ կըլլամ . . . :

* * *

Օր մը սակայն յանկարծակիի եկանք, երբ նորէն դասը . . . Արփիարին վրայ դարձնելով էն գունագեղ նախատինքները թափեց իր ամիս մը շառաջ պաշտել թուած բարեկամին գլխուն: Ֆեւը գլխէն նետած, ու իր ամբողջ ճաղատ գանկովը կարմրած, կը պոռար:

— Սրբիկա՛ն, խայտառակը, պիտի պատուե՛մ գլխակները . . . պիտի կոտրե՛մ . . . պիտի թափե՛մ . . . պիտի՛ . . .

Ու շնչահեղձ կըլլար կատաղութեան անունի ծամածոթիւններով:

Մ՛հ, մեր գրականութեան դասը: Կըմբռնէք որ ասիկա մեզի այլապէս շտհեկան փամ մը անցնել կուտար, քան եթէ ասիլաւէինք իր անտանիկի ընթերցումները մոտիկ ընել:

Բայց քիչ ատենէն ասոր ալ համը փախաւ: Օր մը, խնդումներս ու երջանիկ, մեզի իմացուց որ Արփիարը պաշտելի մարդ մըն էր, եւ թէ պիտի վերսկսէր Հայրենիքին իր թանկագին աշխատակցութիւնը:

Շխտակը այս լուրը մեզի հրճուանքով չը լեցուց:

Ու նորէն սկսան իր յօդուածները երեւալ Հայրենիքի մէջ, արտասանուել Կեդրոնականի մէջ, ու նորէն թնդացին մեր ականջներուն իր յաղթական «Կարդացի՞ք»ները, իր սպանաւլից «Ազո՞ւր էր»ները, ու նորէն իր կարմիր դժբաղդ ֆեւը տառապեցաւ իր հայրենասէր մատներուն հարուածներէն:

Ալ վարժուած էինք, եթէ երկու շաբաթ

իրմէ յօդուած մը չերեւար Հայրենիքի մէջ, անհամբեր կը սպասէինք որ պոթկար իր ամբողջ գառնութիւնն ու անէծքը թերթին խմբագիրներուն դէմ որ «վինքը չարաչար կը խաբէին», որ «իւր աշխատակցութեամբը Հայրենիքի ժողովրդականութիւնը սպանովելէ վերջը» չէին ուզեր իր քմահաճոյքներուն հըպատակիլ, որ . . . «Միջանկի՛՛ս կը ճաշէին» ու իր անգին յօդուածները չէին ուզէր վճարել հնչո՛ւն ոսկիով:

Որովհետեւ այս մարդը, հակառակ իր բոլոր վեհանձն ու ասպետական երեւալու ճիգերուն, հակառակ իր բոլոր անշահախնդիր եւ անձնուրաց հայրենասիրութեան՝ դրամին համար անդարմանելի տկարութիւն մը ունէր որուն մասին Պօլսոյ գրտաճառները ու Ծաղիկի նախկին խմբագրապետ Ա. Չօպանեան կրնան ձեզի յազեցնել անհատուած զուարճալի անկիտօրներով:

Չարմանալի պարագայ մը որ մեր ուշադրութենէն չէր վրիպեր՝ սա էր թէ իր գրծտումները շատ շատ մէկ երկու ամիսէ աւելի չէին տեւեր: Վերջուպէս տեղ մը պէտք էին հրատարակուել իր յօդուածները, եւ Արեւելի մէջ չէր անշուշտ որ պիտի ստորնանար գրել:

Գրական փառասիրութիւնը այս մարդուն մէջ ամէն բանէ աւելի զօրաւոր էր:

Ու գնաց անոր ետեւէն, Ստամբուլի կամուրջին վրայ, երբորդ անգամն ըլլալով, նուաւեցաւ անոր կոնակը, պլլուեցաւ իր սիրական Արփիարին . . . ու մեզի եկաւ կրկնեց:

— Աչքը սիրեմ Արփիար, եթէ շաբաթը անգամ մը չը համբուրեմ զանիկա, պարզապէս դժբաղդ կըլլամ . . . :

Արփիար միշտ ներող ու անյիշաչար եղաւ այդ դարձի վայրկեաններուն: Բաշալեան, Հայրենիքի գրական խմբագիրը՝ աւելի նուրբ ու ազնուական խառնուածք մը՝ չը կըցաւ երբէք տանիլ — նոյն իսկ՝ իր կոնակին վրայ՝ խոշոր համբոյրով մը ծոող աղաչաւոր խնօն:

Ու քանիցս, նորէն Ստամբուլի կամուրջին վրայ, ուր կը սլքտար ան իր երկու «էֆէնտի» բարեկամներուն հանդպելու յոյսով՝

— Լեւոն, մ՛ընէր, մ՛ըլլար . . .
— Կորուէ՛, անպիտան:

* * *

Ատեղութեան մազմազ կրակը միշտ այդ մարդուն սրտին մէջ էր: Դեռ ատեն մը, շատ ցանցառ, երեւցան Հայրենիքի մէջ իր յօդուածները ու կամաց կամաց ալ իր անունը անհետացաւ «Իր» թերթին սիւնակներէն:

Այդ միջոցին արդէն սկսած էր քիչ մը զգալ իր ծիծաղելի դիրքը իր երէկուան բարեկամներուն առջեւ, սկսած էր հասկնալ որ Հայրենիք բան մը չէր կորսնցներ իր աշխատակցութիւնը չը վայելելով, Հայ պանդուխտները չէին զգար իր պակասը, . . . ստանուններն ալ շատ աղէկ կերթային առանց իր Տօնքիչօթական պաշտպանութեանը: Ու կարծես թէ, տխուր ինքնամփոփման վարկեանի մը մէջ, զգաց վերջապէս իր դանցառելի քանակը:

Այդ օրը սկսաւ քիչ մը աւելի պարտաճանաչ ըլլալ: Դասի ատեն, պատիկ կարողութեանը ներածին չափ, ուզեց օգտակար ըլլալ տղաքներուն: Կը յիշեմ որ, այդ համակերպութեան ու լքումի օրերուն, աշխատութիւնով միսթարուելու համար թերեւս կամ իր գրական ողբալի տղիտութիւնը դարմանելու նախանձախնդրութեամբ մը, իր խեղճուկրակ ֆըրանսերէնովը, քանի մը էջ թարգմանել փորձեց թէնէն որուն անունը՝ առաջին անգամ ըլլալով՝ մեծ իմաստասէրին մահուան առթիւ Ա. Չօպանեանի ուսումնասիրութիւններէն(°) իմացած էր:

Այս շրջանը երկար չը տեւեց: Օր մը, դասին կէսին չէինք հասած երբ շուարած լսեցինք իր ատենէ մը իվեր մոռցուած «պիտի կտորե՛մ, պիտի թափե՛մ»ները: Ու այս անգամ, չկրնալով բռնել լեզուին տակ ծամծամածը՝

— Ա՛ն խայտառակը, ա՛ն դաւաճանը, ա՛ն մատնիչը, ա՛ն Արփիարը . . .

Ձէ՛, իրաւ որ չէինք խնդար, պարզապէս կը նեղուէինք: Խօսքս այն պատուական դասընկերներու համար չէ, որոնք իրենց ծրնունդովը կոյր հոգիներ, չպիտի վիրաւորուէին ասանկ ուժով բաղխումներէ եւ որոնց համար փակ պիտի մնայ միշտ բարոյական յուզումներու աշխարհը:

Ասիկա նոր զանակ մըն էր — Արփիարը մատնի՛չ — դոր Խըռօն կը կրկնէր քիչ մը ամէն դասի, խօսքը ուղղելով մասնաւորապէս գասարանին այն զլուխներուն որոնք ամէնէն աւելի կը ծռէին հաւանութեան անասնական խոտարհումներով եւ ուր աչքերը, իրենց ճա-

կատագրական համրութեամբ, անկարող էին տկարացնելու կեղծիքի է՛ն տկար նայուածքը:

Մենք քանի մը ընկեր էինք, գրական աշակերտներ, որ յամառեցանք մեր հաւատքին մէջ հայ գրագէտի մը պարկեշտութեան:

* *

Ասկից քիչ վերջն էր որ անօրինակ դէպք մը պատահեցաւ Պօլսոյ մէջ: Մայրաքաղաքին ամէն կողմը, սրճարաններու, փողոցներու, եկեղեցիի փակերու մէջ կատաղի ամբօս մը կը պատրուէր Հայրենիքի օրուան թիւերը, ու այս կտորիներուն էն անձուէրները կը պոռային երեսիգ. «Հայրենիք մի՛ կարգար, Արփիարը մատնիչ է»: ու ձեռքէդ կը յափշտակէին փառաւոր թերթը որ իր վեց տարուան տագնապալից շրջանին մէջ, աւելի եւ այլապէս օգտակար եղաւ Հայ ազգին քան թէ բոլոր Հնչյակները, Դրօշակները ու Մարտերը միասին:

Օ՛հ, ամբօսներու կոյր մղումը: Այսպէս, առանց ոչ մէկ անհերքելի, անվիճելի փաստի, Հայ գրագէտ մը ու քսանընկեր տարիներու հրապարակային է՛ն կարեւոր անձնաւորութիւններէն, է՛ն արդիւնաւոր ու ժողովրդական աշխատաւորներէն մէկը կամբաստանուէր մատնութեան անուելի ոճիրովը, ու չկար բողբոջ մը. ու այդ զինով ամբօսը, զուրկ ամէն խըղճահարութենէ, կը քանդէր վայրագօրէն իր երէկուան կուռքը:

Այդ մարդիկները ի՞նչպէս կրցան չվարանիլ այն եկրադրութեան առջեւ որ չորս Հայ սիրուած գրագէտներ, Արփիար, Բաշալեան, Շահնազար եւ Օտեան կրնային մատնութեան ու Ազգին դէմ դաւաճանութեան գործի մը մէջ մեղսակից ըլլալ:

* *

Շատ սպուշ ըլլալու պէտք չկար չհակընալու համար թէ՛ այս դժնդակ տուամին հեղինակը կամ հեղինակներէն մէկը, մութին մէջ քրտընող՝ սեւհոգի Խըռօն էր: Իրա՛ւ որ հանձարի պէտք չէր ունեցած անոր յաջողութիւնը ապահովելու համար:

Դէպքերը որ յաջորդեցին, ծանօթ են ամենքնուգ: Գիտէք թէ ի՛նչ ամօթալի վատութեամբ խուսաբեցաւ Խըռօն պատուոյ ատեանէն որ իրեն ամէն երաշխաւորութիւն կուտար:

Բան մը միայն մոռցուած ըլլալ կը թը-
ւի է՛ն անմոռանալին, է՛ն հրէշայինը:

— Դաշունի հարուածը որ, իրիկուն մը,
մուք նախքան մեջ, կռնակին միտուցաւ իւեղն
Արփիարին կուրծփին, որ մագ մնաց պիտի վերջ
սար այդ աշխարհ ու զեղեցիկ կեանքին եւ որ
յառիտեանական ունիւրը, արիւնի անջնջելի արասը
պիտի մնայ՝ Դաշնակցական կոչուած՝ մարդաս-
պաններու ընկերութեան նախին . . . :

* * *

Խըռօն՝ միշտ մութին մէջ սողալով, սեւ
ու խոնաւ պատին տակ Ասօթին ու Խղճիխայ-
թին, կը կարծէի որ մոռցնել տալ կուզէր մե-
զի իր գոյութիւնը:

Խարուեր եմ:

Այսօր, ազատ Եւրոպայի մէջ, նորէն ե-
րեւան կելլայ ան իր սպառնալիքներովը:

— Տօփուկեանէ՛ր, կը պոռայ, տօփուկեան-
է՛ր ունիմ . . .

Ու Խըռօսիներու պար մը — Շարժումի
խմբագիրները — «դեմ կը բռնէ» այս անտիպ
եղանակին: Ու Ա. Չօպանեան անհամբեր կը-
պասէ անոր հրատարակութեանը . . . :

Ձէ՛, մենք նախատինքը չպիտի ընենք
Արփիարին իր մատնչութեան փաստերուն ըս-
պասելու, պիտի տարակոյս մը տեսնելով նոյն
իսկ սկեպտիկ սպասումի մը մէջ:

Իսկ քեզի, Խըռօ՛, պիտի թքնենք երե-
ւոյ ու անցնինք, չկրնալով երբէք հասկնալ
թէ ի՞նչ էր ուզածդ այդ մարդէն՝ զոր ատեն
մը կը պաշտէիր, զոր սպաննել փորձեցիր եւ
զոր սպահովարար նորէն պիտի համբուրես
օր մը . . . :

* * *

Արփիարեան մը, այնպէս չէ՞, այս տո-
ղերը գրողը, — ըսէ՛ք, մի քաշուիք, այնպէս
չէ՞ . . . բը՛ֆ:

Ձէ, Արփիարեան մը չեմ, ու զինքը գրգ-
ւելու համար չէ՛ — ինձի հաւտալու բարու-
թիւնը ունեցէք գոնէ — որ ըրի այս նեղա-
ցուցիչ խօսքերը: Գրագէտ Արփիարը զիս
չընկճեր իր մեծութեանը տակ. ընդ հակառակը:

Արփիարեան մը չեմ: Ասած եմ այն Ար-
փիարը որ Մամուրեանի մը ալեւոր ու պաշ-
տելի գլխուն վրայ իր անպատկառ նախատինք-

ները թափեց կատաղի բանակուի շրջանի
մը մէջ: Չեմ սիրեր այն Արփիարը որ, մոռ-
նալով իր երէկուան ըմբոստացումները, կելլայ
— ամբողջ քնարնրգութիւն կտրած — Խրիմ-
եան մը աստուածացնելու:

Բայց չեմ կրնար — ձեզի հաճոյք մը
պատճառելու համար — ուրանալ ինչ որ այդ
մարդը եղաւ մեր վերջի քսան տարիներու
ազգային կեանքին մէջ, իբրեւ գրագէտ եւ
իրբեւ հրատարակագիր:

Եւ սակայն, եթէ բան մըն ալ եղած
չըլլար Արփիար, իր հրատարակային կեան-
քին մէջ՝ Նուրեանի մը երեսին փակցուցած
ապտակը՝ ու գրականութեան մէջ՝ «սիրացու»
բառին ստեղծումը կը բաւեն որ . . . արձան մը
կանգնեի իրեն:

Ասիկա մի՛ մոռնաք:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Յ. Գ. — Վերջին պահուն կիսանակի քե
Խըռօն Պոլիս դարձած է, վասաբար վաստուս սա-
րով պասոյ ասեանի առաջարկին: Այս րորը մեզի
չգարնացներ, ինչպէս չպիտի զարնանակի երբ վա-
րը նորէն տեսնակի Արփիարը . . . Նազարեկի՛ մը
նուազ յարգուած այս ազգին մէջ:

Ս. Պ.

* * * Կը ցախիկ որ նիւթերու առասու-
րեան պասնառաւ ստիպուեցակի յայտնի քիսիս ձգել
մեր պասնառակի Շայոֆ բարեկալիս մեկ ուսում-
նասիրութիւնը(°) Վիեննայի Անկիսիբար հայրե-
րուն վրայ:

ՎԱՂՈՒԱՆ ՁԱՅՆԸ կը հրատարակուի ա-
մէն ամսոյ 15 ին: Բաժանորդագիրն է ամեկ
սեղի հաւար տարեկան 5 շիլին կանխիկ:

Նամակ կամ բաժնեգիրն զրկել առ՝

S. BARTEVIAN,
21, BRIGHTON ST., OXFORD RD.,
(England.) MANCHESTER.

